

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱԸԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունիսի 3-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ա.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Համաշխարհային բանկի նախագահ Ջեյմս Վուլֆենսենին և տիկնոջը: Նրանց ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության արտոգործնախարար Վարդան Օսկանյանը:

Վեհափառ Հայրապետը ողջունելով իր վաղեմի բարեկամին՝ պրն. Վուլֆենսենին, շնորհակալություն հայտնեց Համաշխարհային բանկի այն ներդրումների համար, որոնք այնքան կենսական են Հայաստանի տնտեսության ամրապնդման համար:

Իր հերթին ՀԲ-ի նախագահը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ ցանկալով Նորին Սրբությանը առողջություն և բարի ապաքինում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը պրն. Վուլֆենսենին նվիրեց Սբ. Էջմիածնի պատկերով գրքերին:

ՄԱՍՆՈ ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՋՈՆ ՀԱՆԹՍՄԱՆԸ

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց ամերիկացի գործարար Ջոն Հանթսմանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրին, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը պրն. Հանթսմանին փոխանցեց Հայոց Հայրապետի գնահատանքը՝ անցնող տարիների ընթացքում Հայաստանում իրականացրած գործունեության և մարդասիրական ձեռնարկների համար:

Իր նվիրվածությունը հայտնելով Հայաստանին, պրն. Հանթսմանը նշեց, որ մեծագույն հարգանք է տածում դեպի Հայոց Եկեղեցին, և իր սերն առ Հայաստան պայմանավորված է նաև այս զգացումով:

Հանդիպման ավարտին պրն. Հանթսմանը առողջության և ապաքինման իր բարի մաղթանքները խնդրեց հայտնել Վեհափառ Հայրապետին, ում հետ նախկինում հանդիպելու մեծագույն պատիվն է ունեցել:

ՄԱՍՆՈ ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ